

ԴՐՈՒԱԳ Գ.

ԾԹ. Արդ՝ դարձեալք անդրեն² յառաջին դրուագն՝ գրեսցուք ի կարգի: 2 Իսկ յամին եալթնետասներորդի³ Յագկերտի արքայի իշխանն Վրաց Աշուշայ աղաչէր զաւագս դրանն արթունի, բազում եւ անհամար կարասի ծախեալ իւրաքանչիւր ումեք, եւ մանաւանդ առաւել⁴ անաւրէն հազարապետին Միհրներսեհի. զոր մեծաւ ջանիւ եւ սաստիկ աշխատութեամբ հաւանեցուցեալ՝ տայր ասել ցթագաւորն Յագկերտ, զի շնորհեսցէ նմա⁵ զորդիս երանելոյ⁶ նահատակին Յմայեկայ, ի տոհմէն Մամիկոնէից, զորս առեալ էր նենգաւոր իշխանին Սիւնեաց Վասակայ ի դայեկաց՝ որպէս զորդիս մահապարտաց, եւ տարեալ էր ի դուռն⁷, զի մեռցին. որք էին յոյժ տղայք: 3 Եւ մարդասիրին Աստուծոյ, բարեխաւսութեամբ սրբոյ արեան հարց լոցա, հաւանեցուցեալ զմիտս թագաւորին՝ պարգեւեաց Աշուշայի, որպէս կարի առն սիրելոյ եւ վաստակաւորի՝ զանհաւատալի ամենեցուն զմեծ նորա խնդիրն:

4 Եւ Աշուշայի տեսեալ զայն եւ ընկալեալ ի թագաւորէն զմեծն պարգեւ՝ յարուցեալ ի խորանին առաջի ամենեցուն անկեալ յերկիր հոլովէր այսր եւ անդ⁸, եւ ապա հարկանէր զգլուխ ի գետինն. այսպէս կատարէր զերկրպագութիւնն: 5 Եւ տեսեալ զայս թագաւորին եւ ամենեցուն որ ի խորանին էին, եւ զարմացեալք մեծապէս, թէ զի՞նչ արար այրն, հարցանէր ցնա թագաւորն, թէ «Վրաց բոլեշխ, զի՞նչ է այդ նոր իմն գործ, զոր ցուցեր դու մեզ այսաւր»: 6 Եւ պատասխանի տուեալ Աշուշայի՝ ասաց, թէ «Բարերար արքայ, դուք ինձ նոր պարգեւ⁹ շնորհեսցէք, զոր այլ իմ ընկերաց ծառայի ի ձեռն¹⁰ չէր գտեալ. եւ ինձ արժանի է նոր երկրպագութեամբ երկիր պագանել ձեզ, զոր ձեր յայլ ծառայէ զայնպիսի երկրպագութիւն երբեք չէր տեսեալ»: 7 Եւ լուեալ զայսպիսի բանս թագաւորին յԱշուշայէ եւ ամենայն բազմութեան աւագանւոյն¹¹՝ յոյժ գովեցին զայրն եւ մեծապէս զարմացան:

1 ՁԱտ. չիք Դրուագ Գ. ԲԳտ. Դրուակ Գ

2 Ձ. անդէն

3 ՏՏ. եթթնետասներորդի

4 ՏՏ. չիք առաւել

5 ՏՏ. շնորհեսցեն. Ձ. շնորհեսցես.- հին ձեռագրում, թուի, եղել է շնորհեսցենմա

6 ՏՏ. երանելոյ

7 ՏՏ. տարեալ ի դուռն

8 Ձ. այսր անդր

9 Ձ. նոր պարգեւս

10 Ատ. զոր այլ իմն ընկերաց ծառայի ի մենջ. ԲԳտ. ուղղագրել են զոր այլ ոմն ընկերաց ծառայից ի մենջ

11 ՏՏ. աւագանոյն